ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. ԵՒԴՈԿԻԱՑԻ.—Մբ. կը վախճանի 1835ին։

ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. ՄԱՐԳԱՐԵԱՆ, ԵՐԵՒԱՆՑԻ.—Մբ. Ս. Էջմիածնի. ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը 1728-1735 եւ վերադարձին հանդիպելով Պոլիս, Զմիւռնիա և Մանիսա, կ'ուղևորի Ս. Էջմիածին։ Մանիսայի Ս. եկեղեցիին մատենադարանին մէջ գտնուած ձեռագիր Գանձարանին մէջ 1835ին կը գրէ հետեւեալ յիշատակարանը. «Թվ. ՌՃՁԴ (= 1735) յուլիսի ի. ումն ես Երեւանցի Մարգարի որդի Երեմիայ Պարոնտէրս եկի Ս. Երուսաղիմայ Մանասեայ. գնացի Ս. Էջմիածին»։ (Արմաշ. Ցուց. թ. 217, էջ 552)։

ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. ՏԷՐ ՍԱՀԱԿԵԱՆ, ԽԱՐԲԵՐԴՑԻ (Քէսիրիկ գիւղացի).—Մբ. Ծ. 1824ին, աւազանի անունը Ղազարոս. Ձռ. 1857ին. Նե. Ռուսաստանի եւ Պարսկաստանի (1866-69). ՏՑՊ. 1870ին. կը ձեռնադրուի եպս. 1872ին. Պատրիարքական Տեղապահ (1885-89). արքեպս. 1889ին. 1892ի կթղ.ի ընտրութեան քառանուն ընտրելիներէն էր Երեմիա։ Կը վախճանի 1900ին Երուսաղէմի մէջ. յիշատակ կը թողու չորս մթերանոցներ ի նպաստ Ս. Յակոբի վանքին։

ԵՐԵՄԻԱ ԵՐԷՑ.— Ղալաթիոյ Ազգ. Մատենադարանի, թ. 92, Գրիգոր Նիւսացի և այլն. ձեռագիրն՝ որ 1674ին գրուած է Թոգատցի Սուքիաս վրդ.ին համար Ս. Յակոբի վանքին մէջ Երեմիա երէցի մը ձեռքով, ունի հետեւեալ յիշատակարանը. «Նաեւ զստացող գրոցս զՍուքիաս ած.աբան վարդապետն եւ զծնողսն իւր յիշեսջիք ի Տէր, որ ետ գրել զսուրբ գիրքս ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. Թվ. հայոց ՌՃԻԳ (= 1674), ձեռամբ սոսկ եւ անպիտան յոգնամեղ Երեմիա երիցիս յիշատակ յաւիտենական, զի եւ դուք յիշեալ լինիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ.» (Կիլ. Ցուց. կ. պ. անտիպ)։ Բաց աստի 1671ին Ս. Յակոբի մէջ ընդօրինակած է (ՄՁ. Թ. 623) ձեռագիրը յիշեալ Սուքիասին համար։ (Խապ. Ցուց. տետր Ը)։

ԵՐԵՄԻԱ (ՏԻՐԱՑՈՒ) ԷՐԶՐՈՒՄՑԻ.— 1737ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, և ուխտէն առաջ, Հալէպի Զըխբրլի խանին մէջ գտնուող ճաշոցին մէջ կը գրէ հետեւեալ յիշատակարանը. «Ես յԱրզրումցի խոճայ յԱստատուրի որդի, որ յիւելի անուն լայճոյ ասին և տիրացու Երեմեաս եկի